ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 04

10/02/2017Թ.ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 10/02/2017 թ. թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Համայնքային բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
2. Համայնքային բյուջեում վերաբաշխում կատարելու մասին
3. Համայնքի ավագանու 29.12.2016թ. թիվ 74 որոշումն ուժը կորցրած ճանաչելու , համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը,աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4. Տեղական տուրքերի եվ վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 05-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվելու համար 9950հազ. դրամը և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների 1050 հազ. դրամ գումարը ներառել համայնքային բյուջեի եկամտային մաս 1351 տողին և նպատակաուղղել.

1. 9950 հազ. դրամ նախադպրոցական կրթություն բաժին 9 խումբ 1 դաս 1ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին հոդվածին /հոդված 45 1/ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար , այդ թվում՝

   - 4350 հազ-ական դրամ թիվ 1 և և 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին և 1250 հազ. դրամ թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար :

2. 1050 դրամ արտադպրոցական կրթություն բաժին 9 խումբ 5 դաս 1 ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4511/ Գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար :

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈՂՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 06-Ն
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքային բյուջեի ֆոնդային մասի համայնքի պահուստային ֆոնդ բաժին 11 խումբ 1 դաս 2 ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 35400 հազ. դրամ պակասեցնել ավելացնելով՝

ա/ 3000 հազ. դրամ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 1 խումբ 6 դաս 1ոլորտի շենքերի և շինությունների կառուցում հոդվածին /հոդված 5112/ համայնքի տարածքում տեսահսկման համակարգի տեղադրման համար :

բ/ 21000հազ. դրամ նույն ոլորտի շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածին / հոդված 5113/ այդ թվում՝ ,,Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ,, ՀՈԱԿ -ի շենքի կապիտալ նորոգման համար 16000 հազ. դրամ , 5000հազ. դրամ Արսենյան 5 բ/բ բնակելի շենքերի բակի հիմնանորոգման համար :

գ/ 3400հազ դրամ փողոցային լուսավորություն բաժին 6 խումբ 4 դաս 1 ոլորտի շենքերի և շինությունների կապիտալ նորոգում հոդվածին /հոդված 5113/ Վ. Գևորգյան փողոցի լուսավորության ցանցի նորոգման համար :

դ/ 8000 հազ. դրամ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ բաժին 6 խումբ 6 դաս 1 ոլորտի շենքեր և շինություններ կապիտալ վերանորոգում հոդվածին /հոդված 5113/ համայնքի Շահումյան 16 բ/շենքի տանիքի նորոգման համար :

2. Տալ համաձայնություն համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ոլորտի համայնքային պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 993 հազ. դրամ պակասեցնել ավելացնելով՝

ա/ 300 հազ. դրամ բաժին 4 խումբ 2 դաս 1 ոլորտի մասնագիտական ծառայություններ հոդվածին / հոդված 4241/ համայնքում անասնաբուժական ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար :

բ/ 372 հազ. դրամ նախադպրոցական կրթություն բաժին 9 խումբ 1 դաս 1 ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին հոդվածին / հոդված 4511/ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության ժամանակավոր զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի հատուցման համար,որպես դրոշմանիշային վճար վճարելու նպատակով , այդ թվում՝

- ,,Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ,, ՀՈԱԿ - 120 հազ. դրամ
- ,,Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզ,, ՀՈԱԿ - 108 հազ. դրամ
- ,,Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ,, ՀՈԱԿ - 144 հազ. դրամ

գ/ 219 հազ. դրամ արտադպրոցական կրթություն բաժին 9 խումբ 1 դաս 1 ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կազմակերպություններին հոդվածին / հոդված 4511/Հայաստանի Հանրապետության Պաշտպանության ժամանակավոր զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի հատուցման համար,որպես դրոշմանիշային վճար վճարելու համար,այդ թվում՝

- ,,Եղեգնաձորի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն,, ՀՈԱԿ - 84 հազ. դրամ
- ,,Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոց ,, ՀՈԱԿ - 135 հազ. դրամ

դ/ 102 հազ. դրամ շրջակա միջավայրի պաշտպանություն /այլ դաերին չպատկանող/ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական համայնքային կամակերպություններին հոդվածին /հոդված 4511/ ,,Եղեգնաձորի համայնքային տնտեսություն ,, ՀՈԱԿ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Պաշտպանության ժամանակավոր զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի հատուցման համար,որպես դրոշմանիշային վճար վճարելու համար :

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈՌՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 07

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.12.2016Թ. ԹԻՎ 74 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ , ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի և ,,Իրավական ակտերի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 29.12.2016թ. թիվ 74 որոշումը :
2. Հաստատել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝ համաձայն N 2 հավելված /:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈՒՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հավելված 1
Հաստատված է
Եղեգնաձորի համայնքի ավագանու
2017թ. փետրվարի 10-ի թիվ 7 որոշմամբ

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

կառուցվածքային ստորաբաժանում

1. Ֆինանսական բաժին
2. Ներքին աուդիտի բաժին

առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Եղեգնաձորի տարածքային բաժին

Հավելված 2
Հաստատված է

Եղեգնաձորի համայնքի ավագանու

2017թ. փետրվարի 10-ի թիվ 7 որոշմամբ

Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը -19
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	254540
Աշխատակազմի քարտուղար	1	243250
Համայնքի ղեկավարի օգնական	1	125040
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ		
Բաժնի պետ	1	241540
Գլխավոր մասնագետ	1	145630
Առաջատար մասնագետ	3	125040
ՔԿԱԳ ԲԱԺԻՆ		
Բաժնի պետ	1	256623
Բաժնի առաջին կարգի մասնագետ	1	133602
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ		
Բաժնի պետ	1	241540
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
Գլխավոր մասնագետ- գլխավոր ճարտարապետ	1	145630
Գլխավոր մասնագետ – իրավաբան	1	145630
Առաջատար մասնագետ	1	125040
Առաջատար մասնագետ	1	125040
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Գործավար	1	82150
Քարտուղարուհի	1	82150
Վարորդ	1	82150
Հավաքարար	1	82150

Համայնքապետ Գ. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,25183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 08-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ,14-րդ և 25-րդ հոդվածների և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Եղեգնաձոր քաղաքի տարածքում տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

Տեղական տուրքերի դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող

դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթանասունհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթանասունհինգ հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ մեկ միլիոն դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երեք հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ինը հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներեք հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

11) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

12) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ հարյուր հիսուն դրամ.

13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասնհինգ հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

<u>Տեղական վճարների դրույքաչափերը</u>

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց հինգ հազար դրամ փոխհատուցման վճար

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց հինգ հազար դրամ փոխհատուցման վճար

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց հինգ հազար դրամփոխհատուցման վճար

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց երկու հազար փոխհատուցման վճար

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց երկու հազար փոխհատուցման վճար

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց հինգ հազար դրամ փոխհատուցման վճար

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝ յուրաքանչյուր շնչի համար երկու հարյուր տաս դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝ հազար դրամ

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց չորս հազար հինգ հարյուր դրամ փոխհատուցման գումար

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի

կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց չորս հազար հինգ հարյուր դրամ փոխհատուցման գումար

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար:

2. Ուժը կորցրած ճանաչել 29.12.2016թ.-ի թիվ 71-Ն որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈՌՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ